

Սարի գլխին տպարանը

Սրանից 57 տարի առաջ էր: Գեղածիծաղ մայիսն էր, արեգակը դեռ նոր էր բարձրացել ու իր կենսաբեր շողերով ողողել ամբողջ բնութիւնը: Թաւաշաթիւ գեփիւռը մեղմիկ խաղալով Վարագայ լեռան ծաղկազարդ լանջերից բարև էր տանում Վանայ ծովակի մշտածիծաղ ալիքներին: Ամբողջ բնութիւնը զւարթ էր, ուրախ, զարգարուն ու հանդիսաւոր:

Դէպի Վարագ տանող նեղ ու ոլորապտոյտ կածաններով մի բեռնաւորւած կարաւան էր բարձրանում: Մի տարօրինակ կարաւան էր դա. բեռները ճիշտ է փոքր էին թւում, բայց գրաստները ճկուն էին, տնքում ու քրտինքը պատել էր նրանց: Կարաւանապետը, մի հուժկու ձիաւոր, գնում էր առաջից, բայց շուտ-շուտ ետ էր դառնում, խնամքով շօշափում զարմանալի բեռները, գգուշացնում բոլորին ու էլի առաջ ընկնում: Դա մի պարթևահասակ տղամարդ էր, 30—35 տարեկան. միայն կարճ ու փեշերը մէջքին փաթաթած վերարկուն էր յիշեցնում, որ նա հոգևորական է, մի վարդապետ: Գլուխը բաց էր. սևաթոյր խիտ գանգուրները ծածանւում էին գեփիւռից: Կրակոտ, խոշոր աչքերն ու հեղահամբոյր դէմքը վերին աստիճանի համակրելի

տեսք էին տալիս նրան: Դա այն մարդն էր, որ յետոյ կոչւեց «Հայոց Հայրիկ»:

Այդ գեղադէմ մարդը, թողած աշխարհը իր վայելքներով, վանքն էր գնացել, վարդապետ դարձել: Ըմբռնելով, որ միայն գիրն ու գրականութիւնն է փրկութեան դուռը բանալու իր պաշտած ու թշուառ ազգի, գոնէ յետագայ սերունդի համար, Մկրտիչ վարդապետը ոգևորւած էր:

Սէրը, հաստատակամութիւնն ու աշխատանքը ամեն բան կանեն, և նա ջորու բեռներով տպարան էր տանում վեր, հայրենիքի բարձր լեռներից մէկի գագաթը, որ այնտեղից արծիւների թևերով տպւած թերթեր թոցնի հայրենի քաղաքներն ու շէնքերը:

Այդ զարմանալի ծանր բեռները տպարանական մամուլ ու տառեր էին, որով Տաճկահայաստանում առաջին տպարանը հիմնւեց: Այդ տպարանի տէրն էլ այդ երիտասարդ վարդապետն էր, գրաշարն էլ, տպողն էլ և այնտեղ տպող «Արծիւ վասպուրականի» թերթի խմբագիրն էլ ինքն էր, գրողն էլ ինքն էր, սրբագրողն էլ, ցրիչն էլ:

Ահա այսպիսի ոգևորութեան կարող է հասցնել լոյս ու գիտութիւն տարածելու միտքը:

Սիմակ

